ՁԵՎ N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 122

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Արմավիր քաղաքի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-001-0052-0045 կադաստրային ծածկագրով 0.186 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր	04-001-0052-0045 կադաստրային ծածկագրով 0.186 հա մակերեսով հողեր բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Միաժամանակ տեղեկացնում ենք, որ կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարության պահանջը՝ նշված հասցեում գտնվող հողամասի վարչական շենքի ետնամասով, պատերի վրայով մետաղական շինվածքների միջոցով ամրացված է Դ-57մմ տրամագծի նույն վարչական շենքի հարևանությամբ գտնվող բազմաբնակարան շենքը սնող վերգետնյա ցածր ճնշման գազատար, ուստի կառուցապատման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նշված հանգամանքը /գրությունը կցվում է/:

4. ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Արմավիր քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, « 15 » « մայիսի » 2023թ.